ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Քաղաքացիների դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ
/2014թ./

1. Ստացվել են նամակներ ընդամենը 2448

որից՝

աջակցություն	2415
առաջարկություն	4
հարցում	5
բողոք	24
այդ թվում՝	
կրկնակի	24
կոլեկտիվ	36
3. Ըստ հարցի բնույթի՝	
բնակարանային	38
կոմունալ-կենցաղային	63
շինարարական	24
արդձեռ/տրանսկապ/	6
գյուղատնտեսական	20
բնութ. պահպանութ.	5
առևտրի	1
կենսաթոշակի և նպաստի	8
առողջապահության	306
կրթական և մանկ.հիմն	223
գիտութ.կուլտուրա	3
ֆինանսական	1401
օրենսդրական	1
քաղ. և որդեգրման	8
աշխ.տեղ և հաշվառման	147
հողհատկացում և հողօգտ.	6
ապարատային	118
այլ հարցեր	70

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2014 թվականին քաղաքացիների ընդունելության և նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2014 թվականին քաղաքացիներից ստացվել է 2448 դիմում, որից 2415-ը՝ աջակցության խնդրանքով, 24-ը՝ բողոք, 4-ը՝ առաջարկություն, 5-ը՝ հարցում:

Գյուղատնտեսական, կոմունալ-կենցաղային, բնակարանային, նպաստի և կենսաթոշակի հարցերի վերաբերյալ 129 դիմումներից 115-ին տրվել են սպառիչ պատասխաններ: Հողօգտագործման և հողհատկացման վերաբերյալ 6 դիմումներից 5-ին տրվել է դրական լուծում կամ, գործող կարգի համաձայն, ներկայացվել է ՀՀ կառավարություն: Աշխատանքի տեղավորման մասին 147 դիմումներից դրական լուծում է ստացել 33-ը, մյուսները վերցվել են հաշվառման:

Տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների իրավասություններին առնչվող 63 դիմումներ վերահասցեագրվել են համապատասխան համայնքների և կազմակերպությունների ղեկավարներին:

Նյութական օգնության խնդրանքով մարզպետին դիմած 1401 քաղաքացիներից դրամական օգնություն է ցուցաբերվել 641 հոգու: Անվճար բուժսպասարկման խնդրանքով դիմած 91 քաղաքացիներից բավարարվել է 84-ի խնդրանքը, 67 քաղաքացու տրվել է ծննդօգնության պետական հավաստագրի տրամադրման միջնորդություն, 66 հոգու՝ առողջարանային ուղեգիր:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը: 2014 թվականին կատարվել է 439 քաղաքացիների ընդունելություն:

Բացի այդ, մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ կատարվել են արտահերթ ընդունելություններ:

Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում քաղաքացիների անհատական ընդունելությունը կազմակերպվել է ամենօրյա, աշխատանքային կարգով: